

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 06

Վիճակագրության պետական խորհրդի նիստի

07.05.2003թ.

ժ. 10³⁰

Մասնակցում էին՝

Ս. Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ. Անանյան, Գ. Գևորգյան, Վ. Դանիելյան, Վ. Դավթյան, Յու. Պողոսյան, Հ. Պետրոսյան (*խորհրդի անդամներ*), Ա. Աղազարյան (*խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝

Ջ. Միրզոյան (*ՀՀ ԱՎԾ նախագահի գլխավոր խորհրդական*), Գ. Գյուրջյան (*Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ*), Վ. Սարոյան (*Իրավաբանական բաժնի պետ*),

Օրակարգի նախագծում` երեք հարց.

1. ««Ձև թիվ 1-Ֆ (տարեկան), Ձև թիվ 2-Ֆ (տարեկան), Ձև թիվ 6-Ֆ (եռամսյակային, տարեկան), Ձև թիվ 1-ՏԳ (եռամսյակային, տարեկան) և Ձև թիվ 1-ՏԳ (փոքր) (եռամսյակային, տարեկան) պետական վիճակագրական հաշվետվություններ տրամադրողների ցանկը հաստատելու և դրան կից «Ձև թիվ 1-Ֆ (տարեկան), Ձև թիվ 2-Ֆ (տարեկան), Ձև թիվ 6-Ֆ (եռամսյակային, տարեկան), Ձև թիվ 1-ՏԳ (եռամսյակային, տարեկան) և Ձև թիվ 1-ՏԳ (փոքր) (եռամսյակային, տարեկան) պետական վիճակագրական հաշվետվությունների հավաքագրման համար կիրառված ընտրանքի մեթոդաբանության վերաբերյալ տեղեկանք»-ին հավանություն տալու մասին.

/Ձեկուցող` Վ. Դանիելյան/

2. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 04 հոկտեմբեր 2001 թ. թիվ 50 արձանագրային որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

/Ձեկուցող` Վ. Դանիելյան/

3. Այլ հարցեր. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

3.1 2003թ. ապրիլի 28-29-ը Ալմաթիում կայացած պաշտոնական վիճակագրության հիմնական սկզբունքների կիրառության վերաբերյալ սեմինարին մասնակցության մասին.

/Ներկայացնող` Ս. Մնացականյան/

ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Զվեարկության արդյունքները- կողմ`7, դեմ` 0, ձեռնպահ` 0/

Լսեցին՝

1. «Ձև թիվ 1-Ֆ (տարեկան), Ձև թիվ 2-Ֆ (տարեկան), Ձև թիվ 6-Ֆ (եռամսյակային, տարեկան), Ձև թիվ 1-ՏԳ (եռամսյակային, տարեկան) և Ձև թիվ 1-ՏԳ (փոքր) (եռամսյակային, տարեկան) պետական վիճակագրական հաշվետվություններ տրամադրողների ցանկը հաստատելու և դրան կից «Ձև թիվ 1-Ֆ (տարեկան), Ձև թիվ 2-Ֆ (տարեկան), Ձև թիվ 6-Ֆ (եռամսյակային, տարեկան), Ձև թիվ 1-ՏԳ (եռամսյակային, տարեկան) և Ձև թիվ 1-ՏԳ (փոքր) (եռամսյակային, տարեկան) պետական վիճակագրական հաշվետվությունների հավաքագրման համար կիրառված ընտրանքի մեթոդաբանության վերաբերյալ տեղեկանք»-ին հավանություն տալու մասին.

/Ձեկուցող` Վ. Դանիելյան/

Նշվեց, որ ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ֆինանսների վիճակագրության բաժնի կողմից հավաքագրվող պետական վիճակագրական դիտարկումների մեթոդաբանությունը կատարելագործելու նպատակով ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի կողմից (համատեղ ֆինանսների վիճակագրության բաժնի համապատասխան մասնագետների հետ) մշակվել է «Ձև թիվ 1-Ֆ (տարեկան), Ձև թիվ 2-Ֆ (տարեկան), Ձև թիվ 6-Ֆ (եռամսյակային, տարեկան), Ձև թիվ 1-ՏԳ (եռամսյակային, տարեկան) և Ձև թիվ 1-ՏԳ (փոքր) (եռամսյակային, տարեկան) պետական վիճակագրական հաշվետվությունների հավաքագրման կիրառված ընտրանքի մեթոդաբանության վերաբերյալ» փաստաթուղթը, որի հիման վրա ձևավորվել է վերը նշված հաշվետվական ձևերով ստացվող տեղեկատվության ներկայացնողների անվանական ցանկը: Ցանկը ՀՀ ՎՊԽ նիստին ներկայացվում է՝ հիմք ընդունելով «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի հոդված 12-ի երկրորդ պարբերությամբ սահմանված այն դրույթը, որի համաձայն ՀՀ ՎՊԽ սահմանում է վիճակագրական դիտարկումների մեթոդները և ընտրանքը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաստատել «Ձև թիվ 1-Ֆ (տարեկան), Ձև թիվ 2-Ֆ (տարեկան), Ձև թիվ 6-Ֆ (եռամսյակային, տարեկան), Ձև թիվ 1-ՏԳ (եռամսյակային, տարեկան) և Ձև թիվ 1-ՏԳ (փոքր) (եռամսյակային, տարեկան) պետական վիճակագրական հաշվետվություններ տրամադրողների ցանկը համաձայն հավելված 1-ի և 2-ի:

/Քվեարկության արդյունքները - կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

2. «Ձև թիվ 1-Ֆ (տարեկան), Ձև թիվ 2-Ֆ (տարեկան), Ձև թիվ 6-Ֆ (եռամսյակային, տարեկան), Ձև թիվ 1-ՏԳ (եռամսյակային, տարեկան) և Ձև թիվ 1-ՏԳ (փոքր) (եռամսյակային, տարեկան) պետական վիճակագրական հաշվետվությունների հավաքագրման համար կիրառված ընտրանքի մեթոդաբանության վերաբերյալ տեղեկանք»-ին

/Արձանագրային/

/Քվեարկության արդյունքները - կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

2. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 04 հոկտեմբեր 2001 թ. թիվ 50 արձանագրային որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

/Զեկուցող՝ Վ. Դանիելյան/

Նշվեց, որ առաջարկվող փոփոխությունների կատարումը պայմանավորված է ՀՀ ԱՎԾ առընթեր գիտամեթոդաբանական խորհրդի որոշ անդամների պաշտոնների փոփոխությամբ, ինչպես նաև ՀՀ ԱՎԾ վիճակագրական աշխատանքների բաժնի պետի փոփոխման և բաժնի անվանափոխության հանգամանով:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 04 հոկտեմբերի 2001 թվականի թիվ 50 արձանագրային որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայությանն առընթեր գիտամեթոդաբանական խորհրդի կազմում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա/ «Մարզպանյան Հարություն - Երևանի պետական համալսարան, տնտեսագիտական ֆակուլտետ, դոցենտ» բառակապակցությունը փոխել «Մարզպանյան Հարություն - Երևանի պետական համալսարան, տնտեսագիտական ֆակուլտետի դեկանի տեղակալ, դոցենտ» բառակապակցությամբ,

բ/ «Մարգսյան Հայկ - Երևանի պետական համալսարան, Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ» բառակապակցությունը փոխել «Մարգսյան Հայկ - Երևանի պետական համալսարան, տնտեսագիտական ֆակուլտետի դեկան բառակապակցությամբ,

գ/ հանել «Շաբոյան Արտաշես - ՀՀ ազգային վիճակագրական ծառայության վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության բաժնի պետ (քարտուղար)» բառակապակցությունը,

դ/ կազմը լրացնել «Գյուրջյան Գրիգոր - ՀՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության բաժնի պետ (քարտուղար)» բառակապակցությամբ:

/Արձանագրային/

/Քվեարկության արդյունքները - կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

3. Այլ հարցեր. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

3.1 2003թ. ապրիլի 28-29-ը Ալմաթիում կայացած պաշտոնական վիճակագրության հիմնական սկզբունքների կիրառության վերաբերյալ սեմինարին մասնակցության մասին.

/Ներկայացնող՝ Ս. Մնացականյան/

ՈՐՈՇԵՑԻՆՆ՝ հաշվետվության վերաբերյալ հաղորդումն ընդունել ի գիտություն:

/արձանագրային/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Նախագահ

Ս. Մնացականյան

Քարտուղար

Ա. Աղազարյան